

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/44**

ք. Երևան

«12» դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ա. Գյոզալյանի և «ԽԱՂՄԻՇՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Մ. Համզյանի (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 14.11.2019թ. կնքված համատեղ գործունեության N ՀՊ-1 պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (Պատվիրատուն և Կապալառուն միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արագածոտնի մարզի Կարդենիսի դպրոցի կառուցման (մնացորդային) աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 40-րդ օրացուցային օրը ներառյալ՝ համաձայն պայմանագրի օրացուցային գրաֆիկի (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 54 000 000 (հիսունչորս միլիոն) ՀՀ դրամ, որից՝ 9 000 000 (ինը միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր հրավաքանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Քաղաքաշինության կոմիտե»
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն»
Հ/Հ 900031029676
Հ/Հ 02565827

Գլխավոր քարտուղար

Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ
«Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 1/1
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220553333646000
ՀՎՀՀ 07621825

Տնօրեն

Ա. Գյոզալյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ
«Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 2
«Արղշինբանկ» ՓԲԸ «Իջևանի» սճ
Հ/Հ 247610009828
ՀՎՀՀ 07613551

Տնօրեն՝

Մ. Համբարյան
(ստորագրություն)



Վարդենիս գյուղի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքներ
 Ծավալաթերթ նախահաշիվ

Չ.հ.	Աշխատանքի անվանումը	Չ.մ.	Քանակը	Միավորի արժեքը հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
1	2	3	4	5	6
Բացվածքներ					
3	Այլումինե դռան բլոկ ջերմակամուրջով /բացվող մաս/	մ ²	15.40	47.66	734.03
4	Այլումինե դռան բլոկ ջերմակամուրջով /չբացվող մաս/	մ ²	5.40	30.25	163.37
8	ՄԴՖ-ից դռան բլոկ	մ ²	13.50	31.51	425.35
9	Պատուհանագոգերի տեղադրում 0.35մ լայն.	մ ²	10.46	2.00	20.93
10	Մետաղապլաստ պատուհանագոգերի արժեքը սպիտակ 0.35մ լայն.	մ	61.30	2.97	182.33
11	Սպորտդահլիճի պատուհանների ցանցապատում d=4 100x100 ցանցով ներսի կողմից	մ ²	70.00	7.67	536.68
Ընդամենը					
Հատակներ					
1	Գրունտի տոփանում խճով	մ ²	18.65	0.34	6.31
2	Նախապատրաստական բետոնե շերտ	մ ³	1.80	28.50	51.30
3	Ջրամեկուսացում 2 շերտ, տոլով	մ ²	292.90	5.24	1535.04
4	Խարամաբետոնե հարթեցնող շերտ B7,5 դ.	մ ³	10.60	27.24	288.77
5	Ցեմենտավազային հարթեցնող շերտի կառուցում 20մմ հաստ.	մ ²	339.10	0.91	307.93
6	Ցեմենտավազային հարթեցնող շերտի կառուցում 40մմ հաստ.	մ ²	3.50	1.61	5.65
8	Շրիշակների կառուցում կերամոզրամիտով	մ	41.000	1.29	52.88
10	Մետլախե շրիշակներ	մ	19.400	0.80	15.44
11	Կովրոլիտե հատակների կառուցում	մ ²	90.51	2.86	258.72
12	Հոմոգեն վինիլային հատակ -2+0.7մմ	մ ²	16.00	9.26	148.13
13	Հոմոգեն վինիլային հատակ -4.5+1.1մմ	մ ²	307.20	10.97	3371.30
14	Աստիճանների երեսպատում բազալտե 30մմ սալերով	մ ²	26.200	17.93	469.87
Մետաղական ծածկի կոնստրուկց.					
10	Մետաղական կախովի առաստաղի տեղադրում	տ	0.38	132.75	50.45
11	Երկտավր N14	տ	0.38	457.46	173.84
13	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում ՈՓ115 էմալով 2 անգամ	տ	2.74	59.43	162.84
Տանիք					
5	Ցվիզի կառուցում 0,5մմ հաստ. Ներկված ցինկապատ թիթեղից	զմ	42.00	5.84	245.34
8	Երթիկի կառուցում	հատ	1.00	46.05	46.05
11	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ ³	6.00	7.75	46.48
12	Նույնը, կավարամածի	100 մ ²	5.30	25.09	132.96

13	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների տեղադրում	տ	7.98	88.25	704.22
14	Ապակե բամբակ	մ ²	300.00	0.55	164.74
15	Ցանց Φ 2մմ 50x50	մ ²	300.00	0.41	123.55
16	Տաշտածև հեծան N12	մ	175.00	4.80	840.84
17	Երկտավր N18	զմ	335.00	8.37	2805.32
18	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում 2 անգամ	տ	7.98	60.02	478.95
Ներսի աստիճաններ /1հատ/					
10	Աստիճանների մետաղական բազրիքների տեղադրում	զմ	4.60	7.24	33.31
11	Նույնի յուղաներկում 2 անգամ	մ ²	4.20	0.86	3.61
Ներքին հարդարման աշխատ-ներ					
1	Պատերի սվաղ բարձրորակ գաջի շաղախով	մ ²	540.00	2.92	1576.78
2	Նույնը, առաստաղի	մ ²	270.00	3.16	853.29
5	Շեփերի սվաղ բարձրորակ գաջի շաղախով	մ ²	158.40	4.79	757.97
7	Պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով	մ ²	445.20	1.20	534.75
7	Պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով	մ ²	445.20	1.20	534.75
8	Նույնը, առաստաղի	մ ²	480.60	1.41	678.48
9	Շեփերի յուղաներկում բարձրորակ	մ ²	155.30	1.22	189.03
10	Պատերի յուղաներկում բարձր որակի	մ ²	444.80	1.22	541.41
12	Կախովի առաստաղի կառուցում պլաստմասից	մ ²	26.61	6.52	173.63
13	Կախովի առաստաղի կառուցում "ARMSTRONG"	մ ²	297.10	5.66	1680.75
Արտաքին հարդարում					
2	Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով	մ ²	457.00	0.36	165.15
4	Պատուհանների արտաքին կողմից ջրթափի կառուցում 0.55 մմ հաստ. ցինկապատ թիթեղից 20 սմ լայն. /160.1զմ/	մ ²	14.30	2.97	42.51
Ընդամենը					
Ներքին ջրամատակարարում					
1	Պողպատե ջրագազատար խողովակներ, դ- 25մմ	զմ	10.00	1.52	15.20
2	Նույնը, դ- 20մմ	զմ	7.00	1.05	7.35
3	Նույնը, դ- 15մմ	զմ	5.00	0.92	4.62
4	Փական դ- 25մմ	հատ	1.00	3.46	3.46
5	Նույնը, դ- 15մմ	հատ	11.00	2.74	30.16
6	Ճկուն խողովակ l=500մմ d=15մմ	հատ	17.00	0.57	9.72
7	Լվացարանի ծորակի տեղադրում 15մմ	հատ	20.00	2.06	41.25
8	Ջրատաքացուցիչ կաթսա "ARISTON"	հատ	5.00	90.55	452.77

9	Հախճապակյա լվացարան սիֆոնով	հատ	4.00	12.12	48.47
10	Չժանգոտվող մետաղից լվացարան սիֆոնով	հատ	2.00	18.16	36.33
11	Հախճապակյա զուգարանակոնք	հատ	2.00	16.07	32.13
13	Ցնցուղ	հատ	4.00	6.62	26.48
14	Խողովակների երկշերտ յուղաներկում	մ2	12.00	0.87	10.39
	Ներքին կոյուղի				
1	Պոլիէթիլենե խողովակի տեղադրում դ-50մմ	գմ	10.00	1.29	12.91
2	Նույնը, դ- 100մմ	գմ	15.00	2.27	34.11
4	Պոլիէթիլենե սիֆոն	հատ	15.00	0.80	12.01
5	Ցանցի փորձարկում	մ	25.00	0.33	8.33
6	Պոլիէթիլենե ձևավոր մասերի տեղադրում 100մմ	հատ	24.00	2.18	52.38
7	Նույնը 50մմ	հատ	6.00	1.21	7.26
8	Պոլիէթիլենե ստուգիչի տեղադր. դ-100մմ	հատ	4.00	2.18	8.73
	Ջեռուցում				
	1. Մասնաշենք				
1	Ալյումինե մարտկոցների տեղադրում h=500մմ	էկմ	57.90	0.59	34.41
2	Ալյումինե մարտկոցների արժեքը h=500մմ	սեկց	204.00	2.64	539.10
3	Մարտկոցի կոմպլեկտ	հատ	18.00	1.44	25.95
5	Ջերմակարգավորիչ փական	հատ	18.00	2.99	53.88
6	Հետզծի փական d=15մմ	հատ	18.00	3.08	55.53
8	Պոլիպրոպիլենե խողովակ d=20մմ (Փ 25 X 2,3)	գմ	163.00	2.23	363.21
9	Նույնը, d=25մմ (Փ 32 X 3)	գմ	36.00	2.02	72.87
12	Նույնը, d=50մմ (Փ63 X 5.8)	գմ	96.00	3.97	381.60
14	Ամրաններ խողովակների համար	հատ	280.0	0.15	41.64
17	Խողովակային ջերմամեկուսիչ d=100մմ	գմ	1.00	1.86	1.86
20	Համակարգի փորձարկում	մ	194.00	0.07	14.16
1	Պատի կաթսա 24կՎտ	հատ	1.00	243.61	243.61
2	Ալյումինե մարտկոցների տեղադրում h=500մմ	էկմ	68.00	0.59	40.41
3	Ալյումինե մարտկոցների արժեքը h=500մմ	սեկց	86.00	2.64	227.27
4	Պոլիպրոպիլենե խողովակ 32x5.4	մ	35.00	1.75	61.09
5	Պոլիպրոպիլենե խողովակ 25x4.2	մ	30.00	1.88	56.27
6	Պոլիպրոպիլենե խողովակ 20x3.4	մ	50.00	2.18	109.13
7	Փական 20մմ	հատ	3.00	3.27	9.80
8	Փական 16մմ	հատ	1.00	2.99	2.99
9	Ձեռքի կարգավորման փական 15մմ	հատ	9.00	3.29	29.62

10	Յետզծի փական 15մմ	հատ	9.00	3.06	27.56
11	Դատարկման ծորակ 15մմ	հատ	2.00	3.06	6.12
12	Չտիչ 15մմ	հատ	1.00	2.27	2.27
13	Մարտկոցների կոմպլեկտ	հատ	9.00	1.44	12.97
14	Ձևավոր մասեր	հատ	56.00	0.92	51.75
15	Անցում 15-20մմ	հատ	30.0	0.85	25.45
16	Անցում 15-25մմ	հատ	1.00	0.85	0.85
17	Անցում 32-25մմ	հատ	2.00	0.86	1.72
18	Անցում 26-25մմ	հատ	2.00	0.86	1.72
19	Անցում 20-15մմ	հատ	2.00	0.85	1.70
20	Անցում 16-15մմ	հատ	30.00	0.85	25.45
21	խողովակների ամրացում	հատ	140.00	0.06	8.01
22	Ռետինե մեկուսիչ խողովակ 32մմ	մ	5.00	1.68	8.38
23	Համակարգի փորձարկում	մ	115.00	0.16	17.90
24	Ծխատար տուրքը /գործարանային/	հատ	1.00	11.44	11.44
25	Ճաղավանդակ 200x200մմ	հատ	2.00	3.78	7.56
26	Անցքերի բացում 200x200մմ	հատ	2.00	0.33	0.66
27	Անցքերի փակում	մ3	0.04	68.34	2.73
28	Գազի ցածր ճնշման հաշվիչ G-4	հատ	1.0	23.35	23.35
29	Փական խցանային 20մմ	հատ	1.00	2.96	2.96
30	Պողպատե խողովակ 20մմ	մ	6.00	1.02	6.10
3. Ջեռուցման ներքին ցանցի SPLIT SYSTEM					
1	Խողովակային կոնդիցիոներ SPLIT SYSTEM ARG 45R GENERAL Q ₂ =11810կկ/ժ Q _g =10984կկ/ժ N ₂ =4.35կՎտ N _g =4.57կՎտ	կոմպլ	3.00	1410.63	4231.88
2	Դիֆուզոր 300x300/600x400 L=0.5մ	մ2	2.40	4.69	11.26
3	Կոնֆուզոր 600x400/300x300 L=0.5մ	մ2	2.40	4.69	11.26
4	Պղնձե Ø3/8 խողովակների և 1.0 պոլիէթիլեն խողովակների փունջ ընդհանուր ջերմամեկուսիչ Ø50 խողովակների մեջ	մ	36.00	4.58	164.74
5	Ձգափական d=1մմ պողպատից 300x300	հատ	6.00	7.42	44.50
6	Ձգափական d=1մմ պողպատից 250x200	հատ	3.00	6.27	18.82
7	Օդատար 300x300մմ ցինկապատ 0.6մմ թիթեղից	մ2	20.00	3.90	78.10
8	Օդատար 250x200մմ ցինկապատ 0.6մմ թիթեղից	մ2	7.50	4.26	31.98
